ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

ՈՐՈՇՈՒՄ N 53
08 հունիսի 2021 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի ԹԻՎ 116 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով նախկին անասնաբույժ Ալեքսան Ազատի Սարգսյանի հայտարարությունն այն մասին, որ 2007-2008 թվականներին աշխատելով որպես Զորակապ համայնքի անասնաբույժ, պատվաստանյութերը պահպանելու նպատակով «Անասնաբուծության, անասնաբուժական սպասարկումների, կենդանական ծագում ունեցող հումքի և մթերքի անվտանգության, գյուղատնտեսական կենդանիների համարակալման ու հաշվառման Շիրակի մարզային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունից ստացել է մեկ հատ <<TOSHIBA>> մակնիշի սառնարան, որն ի պահ է հանձնվել Զորակապ համայնքին: Թյուրիմացաբար Զորակապ համայնքի ղեկավարը սառնարանը ներառել է Զորակապ համայնքի գույքացանկում: Այժմ անհրաժեշտություն է առաջացել սառնարանը «Անասնաբուծության, անասնաբուժական սպասարկումների, կենդանական ծագում ունեցող հումքի և մթերքի անվտանգության, գյուղատնտեսական կենդանիների համարակալման ու հաշվառման Շիրակի մարզային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը հետ վերադարձնելու /առկա են Զորակապ համայնքի նախկին ղեկավարների կողմից տրված հայտարարությունները/ և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 34-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով,

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է.

Հանել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 28-ի <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> թիվ 116 որոշման N 15 հավելվածի 7-րդ կետը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	Կողմ՝ ...9	Դեմ՝ ...0	Չեռնպահ՝ ...0
Ն. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ			
Ա. ԱՐՍԵՆՅԱՆ			
Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ			
Կ.ՀՈՎՍԵՓՅԱՆ			
Մ.ՂԱԶԱՐՅԱՆ			
Գ.ՂԶՐՈՅԱՆ			
Բ.ՄԵԼԻՔՅԱՆ			
Ա.ՆԱԶԱՐՅԱՆ			
Ա. ՆԻԿՈՅԱՆ			
Ա.ՈՒՌՈՒՄՅԱՆ			
Վ.ՍԱՀԱԿՅԱՆ			
Ա. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ			
Զ.ՍԱՐԳՍՅԱՆ			
Ա.ՎԱՐՈՍՅԱՆ			

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021 թվականի հունիսի 08
Քաղաք Մարալիկ